Հավելված
Կրթության,գիտության,
մշակույթի և սպորտի նախարարի
2021 թվականի դեկտեմբերի 3-ի
N 2017-Ա/2 հրամանի

Ընդունված է Հայաստանի պետական
տնտեսագիտական համալսարանի
ՈՒԽ Ընդհանուր Ժողովի կողմից
2021 թվականի հոկտեմբերի 22-ին

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ ՀՊՏՀ ՊՈԱԿ) Ուսանողական խորհուրդը (այսուհետ՝ ՈՒԽ) ուսանողական ինքնակառավարման մարմին է, որի գործունեության գլխավոր նպատակը ՀՊՏՀ ՊՈԱԿ-ի ուսանողների իրավունքների և շահերի պաշտպանությունն է:
2. ՈՒԽ-ն ինքնակառավարվող, շահույթ չհետապնդող, կամավորության հիմունքներով ձևավորվող ուսանողական կառույց է: ՈՒԽ-ն գործում է ՀՀ օրենսդրության, ՀՊՏՀ ՊՈԱԿ-ի կանոնադրության և սույն կանոնադրության համաձայն:
3. ՈՒԽ-ի անվանումն է՝
    1) հայերեն՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Ուսանողական խորհուրդ»: Հապավումը՝ «ՀՊՏՀ ՈՒԽ»:
    2) ռուսերեն՝ «Студенческий совет Армянского государственного экономического университета»: Հապավումը՝ «СС АГЭУ»:
    3) անգլերեն՝ «Student council of Armenian state university of economics»: Հապավումը՝«ASUE SC»:
4. Ուսանողական խորհրդի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0025, Նալբանդյան 128:

5. ՈՒԽ-ն կարող է ունենալ ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:
6. «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՊՏՀ ՊՈԱԿ-ի կանոնադրության 13-րդ և 20-րդ կետերի, ՀՊՏՀ ՊՈԱԿ-ի ֆակուլտետի օրինակելի կանոնադրության 15-րդ կետի համաձայն ՀՊՏՀ ՊՈԱԿ-ի ուսանողության ներկայացուցիչներն ունեն 25% ներկայացվածություն բուհի կառավարման մարմիններում՝ խորհրդում, գիտական խորհրդում և ֆակուլտետային գիտական խորհուրդներում:
7. «Կրթության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 10-րդ մասի, ՀՊՏՀ ՊՈԱԿ-ի կանոնադրության 13-րդ և 20-րդ կետերի համաձայն՝ ՀՊՏՀ ՊՈԱԿ-ի կառավարման մարմիններից խորհրդի և գիտական խորհրդի ուսանողության ներկայացուցիչների առաջադրումն ու ընտրությունն իրականացնում է ՀՊՏՀ ՊՈԱԿ-ի ՈՒԽ-ն, իսկ ֆակուլտետային գիտական խորհուրդների ուսանողության ներկայացուցիչների առաջադրումն ու ընտրությունն իրականացնում են համապատասխան ֆակուլտետների ՈՒԽ-երը՝ ՀՊՏՀ ՊՈԱԿ-ի ֆակուլտետի օրինակելի կանոնադրության 15-րդ կետի համաձայն:
8. ՀՊՏՀ ՊՈԱԿ-ի խորհրդում և գիտական խորհրդում ուսանողության ներկայացուցիչների կազմը քննարկվում և հաստատվում է ՈՒԽ-ի նախագահության կողմից՝ ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ, ֆակուլտետային գիտական խորհրդում ուսանողության ներկայացուցիչների կազմը քննարկվում և հաստատվում է ֆակուլտետային ՈՒԽ-ի նախագահության կողմից ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ:
9. ՈՒԽ-ն իր կանոնադրական նպատակների ու խնդիրների իրականացման համար ՀՀ օրենսդրությամբ, ՀՊՏՀ ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ չարգելված բոլոր դեպքերում իրավունք ունի օգտվել համալսարանի տարածքային, գույքային և այլ միջոցներից:
10. ՈՒԽ-ի Կանոնադրությունը, դրա փոփոխությունները և/կամ լրացումները առաջարկվում է ՈՒԽ-ի նախագահության կողմից, ընդունվում՝ Ընդհանուր ժողովի և հաստատվում կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից :
11. ՀՊՏՀ ՊՈԱԿ-ի կազմակերպաիրավական կարգավիճակի վերակազմակերպման դեպքում Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի իրավահաջորդ կազմակերպությունում ՈՒԽ-ն, իրավահաջորդության սկզբունքով, շարունակում է իր գործունեությունը՝ սույն կանոնադրության շրջանակներում:
12. ՈՒԽ-ն իր գործունեությունն իրականացնելիս առաջնորդվում է կամավորության, կոլեգիալության, թափանցիկության և հրապարակայնության, ուսանողական ինքնակառավարման մարմնի ընտրության և հաշվետվողականության, ուսանողական մարմինների աշխատանքներում ուսանողների մասնակցության հավասարության՝ անկախ սեռից, ռասսայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ սոցիալական բնույթի այլ

հանգամանքներից, ինչպես նաև քաղաքական կուսակցությունների և կրոնական կազմակերպությունների ազդեցությունից անկախության սկզբունքներով:

2. ՈՒԽ-Ի ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

13. ՈՒԽ-ի գլխավոր նպատակը ՀՊՏՀ ՊՈԱԿ-ի ուսանողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն է:
14. ՈՒԽ-ի խնդիրներն են՝
    1) ուսանողների շահերի պաշտպանությունը,
    2) բուհում կրթական բարեփոխումների իրականացման, կրթության որակի բարելավման աջակցումը և նախաձեռնումը,
    3) կրթական ծրագրերի մշակման ընթացքում կազմակերպվող ուսանողական հարցումներին և ուսանող-փորձագետների ներգրավմանն աջակցումը,
    4) ուսանողական կյանքին և ուսումնակրթական գործընթացներին առնչվող հարցերի վերաբերյալ որոշման նախագծերի մշակումը, բուհում առկա խնդիրների բարձրաձայնումը և դրանց կարգավորմանը նպաստումը,
    5) ՀՊՏՀ ՊՈԱԿ-ում յուրաքանչյուր քննաշրջանի ընթացքում «Թեժ գծի» հանձնախմբի ապահովումը՝ քննություններին գրանցված խախտումների, սխալմունքների և այլ խնդիրների լուծման նպատակով,
    6) ամփոփիչ ատեստավորման բողոքարկումների ընթացքում բողոքարկման հանձնաժողովին անդամակցությունը և ուսանողի շահերի պաշտպանությունը,
    7) ՀՊՏՀ ՊՈԱԿ-ի ուսանողների համախմբումը, նրանց մասնագիտական և ստեղծագործական ներուժի բացահայտումը,
    8) սոցիալական ծրագրերի իրականացումը, սոցիալապես անապահով ուսանողներին աջակցության տրամադրման կազմակերպումը, մասնակցությունը համապետական մակարդակով իրականացվող սոցիալական ծրագրերին,
    9) ուսանողների մասնագիտական գիտելիքների, գործնական կարողությունների և հմտությունների զարգացմանն ուղղված գիտակրթական նշանակության միջոցառումների, ծրագրերի, տարբեր ձևաչափերով սեմինարների, քննարկումների, աշխատաժողովների, հանդիպումների կազմակերպումը,
    10) ՀՊՏՀ ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպվող գիտաժողովների, աշխատաժողովների, հանրային հանդիպումների և այլ միջոցառումների օժանդակության նպատակով կամավորական հիմունքներով ներգրավումը,
    11) բուհ-բանակ կապի ամրապնդման, ուսանողների շրջանում ռազմահայրենասիրական դաստիարակության տարածման, մարտական ոգու և պատրաստվածության բարձրացման նպատակով հայրենասիրական և այլ միջոցառումների, ծրագրերի իրականացում,
    12) մշակութային միջոցառումների, սպորտային մրցույթների, մարզամշակութային

փառատոնների, արտալսարանային ժամանակի նպատակային կազմակերպումը, ինչպես նաև առողջ ապրելակերպի խրախուսումը,

13) համագործակցությունը ՀՊՏՀ Ֆինանսատնտեսագիտական Քոլեջի ՈՒԽ-ի, ՀՊՏՀ ՊՈԱԿ-ի Եղեգնաձորի և Գյումրու մասնաճյուղերի ՈՒԽ-երի, ինչպես նաև ՀՀ-ում գործող այլ բուհերի Ուսանողական ինքնակառավարման մարմինների, միջազգային ուսանողական, երիտասարդական, հասարակական կառույցների և շարժումների հետ՝ ապահովելով ՀՊՏՀ ՊՈԱԿ-ի ուսանողների մասնակցությունը տեղական և միջազգային ուսանողական և երիտասարդական միջոցառումներին:

3. ՈՒԽ-Ի ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

15. ՈՒԽ-ին անդամակցությունը կամավոր է: ՈՒԽ-ի անդամ կարող է դառնալ ՀՊՏՀ ՊՈԱԿ-ի յուրաքանչյուր ուսանող՝ անկախ ուսուցման ձևից և կրթության աստիճանից:
16. ՈՒԽ-ի անդամ համարվելու հիմք է հանդիսանում ՀՊՏՀ ՊՈԱԿ-ի ուսանողի կողմից լրացված ֆակուլտետային ՈՒԽ-ին անդամակցության հայտաթերթիկը՝ ստորագրված ֆակուլտետի ՈՒԽ-ի նախագահի կողմից:
17. ՈՒԽ-ի անդամը իրավունք ունի ՝
    1) ընտրել և ընտրվել ՈՒԽ-ի ղեկավար մարմիններում,
    2) հանդես գալ առաջարկություններով,
    3) մասնակցել ՈՒԽ-ի կողմից կազմակերպվող աշխատանքներին,
    4) հրաժարվել ՈՒԽ-ին անդամակցությունից,
    5) ՈՒԽ-ի նախագահության լիազորությամբ հանդես գալ կամ ելույթ ունենալ ՈՒԽ-ի անունից:
18. ՈՒԽ-ի անդամը պարտավոր է՝
    1) բարեխղճորեն կատարել սույն կանոնադրության պահանջները և ղեկավար մարմինների որոշումները,
    2) ցուցաբերել աջակցություն ՈՒԽ-ի գործունեությանը, ակտիվորեն մասնակցել նրա կողմից կազմակերպվող միջոցառումներին և դրանց կազմակերպչական աշխատանքներին,
    3) բարձր պահել ՈՒԽ-ի հեղինակությունը:
19. Սույն կանոնադրության պահանջների խախտման դեպքում ՈՒԽ-ի անդամը կարող է հեռացվել կառույցից:
20. Ֆակուլտետային ՈՒԽ-ի նախագահը իրավունք ունի անվստահություն հայտնել տվյալ ֆակուլտետի ՈՒԽ-ի անդամին:
21. ՈՒԽ-ի անդամին անվստահություն հայտնելու հարցը ֆակուլտետային ՈՒԽ-ի նախագահի կողմից բարձրացվում է ՈՒԽ-ի նախագահության հերթական նիստի ընթացքում, որի ժամանակ էլ նախագահության անդամների ձայների պարզ

մեծամասնությամբ որոշում է կայացվում ֆակուլտետային ՈւԽ-ի անդամի՝ ՈւԽ-ին անդամակցության վերաբերյալ:

4. ՈՒԽ-Ի ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

22. ՈւԽ-ն կազմված է հետևյալ ղեկավար մարմիններից՝
    1) Ընդհանուր ժողով,
    2) Նախագահություն,
    3) Վարչություն,
    4) Նախագահ:
23. ՈւԽ-ն կարող է ունենալ Պատվավոր նախագահ:

5. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

24. Ընդհանուր ժողովը ՈւԽ-ի բարձրագույն ղեկավար մարմինն է:
25. Ընդհանուր ժողովը ձևավորվում է 2 տարի ժամկետով:
26. Ընդհանուր ժողովի որոշումները ընդունվում են մասնակիցների ընդհանուր թվի ձայների պարզ մեծամասնությամբ:
27. Ընդհանուր ժողովը ձևավորվում է ֆակուլտետների ներկայացուցիչներից (պատվիրակներից)՝ ֆակուլտետի ՈւԽ նախագահի առաջարկությամբ կամ ֆակուլտետի ՈւԽ անդամի ինքնաառաջադրմամբ՝ բաց կամ փակ քվեարկության արդյունքներով:
28. Յուրաքանչյուր ֆակուլտետի պատվիրակների թիվը հաստատվում է ՈւԽ-ի նախագահության կողմից՝ ըստ բուհի ընդհանուր ուսանողների թվում այդ ֆակուլտետի ուսանողների թվի համամասնության:
29. Ընդհանուր Ժողովը գումարում է հերթական և արտահերթ նիստեր: Հերթական նիստերը գումարվում են տարեկան առնվազն 1 անգամ:
30. Ընդհանուր Ժողովի նիստն իրավասու է, եթե նրա աշխատանքներին մասնակցում է Ընդհանուր ժողովի անդամ հանդիսացող ներկայացուցիչների (պատվիրակների) առնվազն 2/3-ը:
31. Ընդհանուր ժողովի նիստերը վարվում են փակ: Եթե կա Ընդհանուր Ժողովի անդամների առնվազն 1/3-ի առաջարկությունը, ապա նիստին կարող են հրավիրվել այլ անձիք:
32. Ընդհանուր ժողովի արտահերթ նիստ հրավիրվում է ՈւԽ-ի նախագահի առաջարկությամբ կամ Ընդհանուր Ժողովի անդամների առնվազն 1/3-ի որոշմամբ (հարցման սկզբունքով): Ընդհանուր ժողովի արտահերթ նիստի օրակարգը ներկայացվում է վերջինս հրավիրողների նախաձեռնությամբ:

33. Ընդհանուր ժողովը՝
    1) հաստատում է իր աշխատակարգը,
    2) հաստատում է ՀՊՏՀ ՈՒԽ-ի նախագահի ընտրության ընթացակարգը,
    3) հաստատում է ՈՒԽ-ի մշտական հանձնաժողովների կազմը,
    4) ընտրում է ՈՒԽ-ի նախագահին,
    5) հաստատում է ՈՒԽ-ի՝ նախագահության կողմից առաջադրված կանոնադրությունը կամ կանոնադրության փոփոխությունները՝ լիազոր մարմնին ներկայացնելու համար,
    6) քննարկում է ընթացիկ և հեռանկարային հարցեր,
    7) լսում և հաստատում է ՈՒԽ-ի նախագահի տարեկան հաշվետվությունը՝ ՈՒԽ-ի կատարած աշխատանքների մասին:

6. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՊԱՏՎԻՐԱԿՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

34. Պատվիրակների ընդհանուր թիվը 32-ն է, և Ընդհանուր ժողովի որոշումները հաստատելիս՝ յուրաքանչյուրն ունի մեկական ձայնի իրավունք:
35. Ընդհանուր ժողովի պատվիրակներն ընտրվում են իրենց ֆակուլտետներում՝ ֆակուլտետային ՈՒԽ-ի նիստի ընթացքում՝ բաց կամ փակ քվեարկությամբ:
36. Ֆակուլտետներում պատվիրակների ընտրության ողջ ընթացքը տեսանկարահանվում է, իսկ արդյունքները հրապարակվում են Ուսանողական խորհրդի պաշտոնական սոցիալական հարթակներում:
37. Ընդհանուր ժողովի պատվիրակներ են ընտրվում առավելագույն ձայներ հավաքած թեկնածուները՝ ըստ պատվիրակների՝ տվյալ ֆակուլտետի համար սահմանված թվի:
38. Ֆակուլտետային պատվիրակները յուրաքանչյուր պահի կարող են դիմել ֆակուլտետային նախագահին՝ պատվիրակությունից հրաժարվելու համար:
39. Պատվիրակի հրաժարվելու դեպքում ֆակուլտետի ՈՒԽ նախագահը այդ հարցը ներկայացնում է նախագահության հերթական նիստին, որի ժամանակ էլ ձայների պարզ մեծամասնությամբ՝ պատվիրակը կդադարեցնի իր գործունեությունը Ընդհանուր ժողովում:
40. Պատվիրակի թափուր մնացած տեղի համար իրականացվում է ընտրություն՝ ըստ սահմանված կարգի:
41. Ընդհանուր ժողովի կազմավորումից ոչ ուշ քան 20 օր հետո հրավիրվում է առաջին նիստը, որը վարում է ՈՒԽ-ի գործող նախագահը:
42. Այդ նիստի ընթացքում ընտրվում է ՈՒԽ-ի Պատվավոր նախագահը՝ Ընդհանուր ժողովի պատվիրակների ձայների պարզ մեծամասնությամբ:
43. Հաջորդիվ Ընդհանուր ժողովի նիստերը վարում է Ուսանողական խորհրդի պատվավոր նախագահը: Եթե պատվավոր նախագահը բացակայում է, ապա

նիստը վարում է ՈւԽ-ի գործող նախագահը:

7. ՈՒԽ-Ի ՊԱՏՎԱՎՈՐ ՆԱԽԱԳԱՀԸ

44. ՈւԽ-ի պատվավոր նախագահի թեկնածուն առաջադրվում է Ընդհանուր ժողովի պատվիրակների կողմից ՀՊՏՀ ՈւԽ-ի նախկին նախագահների կազմից: Պատվավոր նախագահը ընտրվում է 5 տարի ժամկետով: Քվեարկության ձևը որոշվում է Ընդհանուր ժողովի նիստի ընթացքում:
45. ՈւԽ-ի պատվավոր նախագահը վարում է Ընդհանուր ժողովի հերթական նիստերը, ՈւԽ-ի անունից իրականացնում պարգևատրումներ, շնորհում մեդալներ:
46. ՈւԽ-ի պատվավոր նախագահը Ընդհանուր ժողովի նիստերին մասնակցում է խորհրդակցական ձայնի իրավունքով:

8. ՈՒԽ-Ի ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆԸ

47. Ընդհանուր ժողովի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում ՈւԽ-ի գործունեությունը կազմակերպում է ՈւԽ-ի նախագահությունը:
48. ՈւԽ-ի նախագահությունը ձևավորում են ՈւԽ-ի նախագահը, փոխնախագահը, նախագահի տեղակալը, պատասխանատու քարտուղարը, ֆակուլտետային ՈւԽ-երի և ՈւԽ-ի կազմում գործող մշտական հանձնաժողովների նախագահները:
49. ՈւԽ-ի նախագահությունը՝
    1) մշակում և հաստատում է իր աշխատակարգը,
    2) մշակում և հաստատում է ՀՊՏՀ ՊՈԱԿ-ի կառավարման մարմիններում ուսանողության ներկայացուցիչների ընտրության և հաստատման ներկայացման ընթացակարգը և չափանիշները,
    3) մշակում և հաստատում է ՈւԽ-ի ծրագրերը, կազմակերպում դրանց իրականացումը և ապահովում վերահսկողություն ընդունված որոշումների իրականացման նկատմամբ:
    4) որոշում է կայացնում ժամանակավոր հանձնաժողովներ ձևավորելու կամ լուծարելու վերաբերյալ:
    5) որոշում է կայացնում ժամանակավոր հանձնաժողովի նախագահի՝ ՈւԽ-ի նախագահությունում ձայնի իրավունքի (քվեարկության կամ խորհրդակցական) վերաբերյալ:
    6) ընդունում է ֆակուլտետների ՈւԽ-երի և հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները և հաստատում է նրանց ներկայացրած ծրագրերը:
50. ՈւԽ-ի նախագահության նիստերը գումարվում են հերթական և արտահերթ սկզբունքով:
51. Նախագահության հերթական նիստերը գումարվում են ՈւԽ-ի նախագահության աշխատակարգով սահմանված պարբերականությամբ: Արտահերթ նիստերը

գումարվում են ՈՒԽ-ի նախագահի առաջարկությամբ:

52. ՈՒԽ-ի պատասխանատու քարտուղարը հերթական և արտահերթ նիստերից առաջ նախագահության անդամներին է առաքում նիստի օրակարգը, իսկ նիստերից հետո՝ նիստի արձանագրությունը՝ ստորագրված իր և ՈՒԽ-ի նախագահի կողմից:
53. Նախագահության նիստը իրավազոր է որոշումներ ընդունել, եթե նիստին ներկա է նախագահության անդամների առնվազն 2/3-ը: Որոշումն ընդունվում է ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ:

9. ՈՒԽ-Ի ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

54. ՈՒԽ-ի կազմում գործում են 7 մշտական հանձնաժողովներ, որոնք զբաղվում են ուսանողներին ուսումնական, գիտական, մշակութային միջոցառումներում ներգրավմամբ, ուսանողների սոցիալական խնդիրներով, ազատ ժամանցի կազմակերպման հարցերով, ուսանողության շրջանում առողջ ապրելակերպի խրախուսմամբ, ՈՒԽ-ի կազմակերպչական աշխատանքների և արտաքին կապերի համակարգմամբ:
55. ՈՒԽ մշտական հանձնաժողովներն են՝
    1) Ուսումնագիտական
    2) Լրատվության և հասարակայնության հետ կապերի
    3) Արտաքին կապերի
    4) Սոցիալական հարցերի
    5) Կազմակերպչական
    6) Մշակույթի և ազատ ժամանցի
    7) Սպորտի և առողջ ապրելակերպի
56. ՈՒԽ-ի մշտական հանձնաժողովները կազմավորվում և լուծարվում են Ընդհանուր ժողովի որոշմամբ:
57. Մշտական հանձնաժողովների նախագահներին նշանակում է ՈՒԽ-ի նախագահը՝ ընտրվելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում: Հանձնաժողովների նախագահների կազմում հետագա փոփոխությունները կատարվում են նախագահության որոշմամբ:
58. ՈՒԽ-ի մշտական հանձնաժողովի նախագահին անվստահություն կարող է հայտնել ՈՒԽ-ի նախագահը, իսկ դրա վերաբերյալ որոշումը հաստատում կամ մերժում է ՈՒԽ-ի նախագահությունը իր հերթական կամ արտահերթ նիստի ընթացքում՝ ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ:

10. ՖԱԿՈՒԼՏԵՏԱՅԻՆ ՈՒԽ-ՆԵՐԸ

59. Ֆակուլտետային ՈՒԽ-ն ՀՊՏՀ ՈՒԽ-ի կառուցվածքում ներառված, ՀՊՏՀ ՊՈԱԿ-ում գործող կառուցվածքին համապատասխանող ֆակուլտետների ուսանողներին

կամավորության հիմունքներով միավորող ՈՒԽ-ի սկզբնական կառույց է:

60. Ֆակուլտետային ՈՒԽ-ն գործում է սույն կանոնադրության և ՈՒԽ-ի նախագահության որոշումների համաձայն:
61. Ֆակուլտետային ՈՒԽ-ն կարող է ունենալ փոխնախագահ, նախագահի տեղակալ և պատասխանատու քարտուղար, ովքեր նշանակվում և ազատվում են ֆակուլտետային ՈՒԽ-ի նախագահի կողմից:
62. Ֆակուլտետային ՈՒԽ-ի նախագահը, փոխնախագահը, տեղակալը և պատասխանատու քարտուղարը ձևավորում են ֆակուլտետային ՈՒԽ-ի նախագահությունը:
63. Ֆակուլտետային ՈՒԽ-ի նախագահությունը՝
    1) հաստատում է իր աշխատակարգը,
    2) զբաղվում է ՀՊՏՀ ՈՒԽ-ի նախագահության որոշումների ապահովման աշխատանքներով իրենց ֆակուլտետի շրջանակներում,
    3) որոշումներ է կայացնում Ընդհանուր ժողովում ֆակուլտետի պատվիրակների և ՀՊՏՀ ՊՈԱԿ-ի կառավարման մարմիններում ֆակուլտետի ուսանողության ներկայացուցիչների առաջադրման վերաբերյալ՝ ըստ ՀՊՏՀ ՊՈԱԿ-ի ուսանողների թվում ֆակուլտետների համամասնության,
    4) ՀՊՏՀ ՊՈԱԿ-ի կառավարման մարմիններում ֆակուլտետի ուսանողության ներկայացուցիչների առաջադրման օրինակելի ընթացակարգը մշակում և հաստատում է ՀՊՏՀ ՈՒԽ-ի նախագահությունը:
64. ՈՒԽ-ի կազմում գործող մշտական և ժամանակավոր հանձնաժողովները ֆակուլտետներում կարող են ունենալ հանձնաժողովի ֆակուլտետային պատասխանատուներ, ովքեր նշանակվում և ազատվում են տվյալ հանձնաժողովի նախագահի կողմից:
65. Ֆակուլտետային ՈՒԽ-երի նախագահներն առաջադրվում կամ ինքնաառաջադրվում են Ընդհանուր ժողովի՝ տվյալ ֆակուլտետի պատվիրակների կազմից: Քվեարկությանը մասնակցում են միայն այդ ֆակուլտետի պատվիրակները:
66. Ֆակուլտետի ՈՒԽ-ի նախագահի ընտրությունն իրավազոր է, եթե քվեարկել են տվյալ ֆակուլտետի պատվիրակների առնվազն 2/3-ը:
67. Ֆակուլտետային ՈՒԽ-երի նախագահները ընտրվում են Ընդհանուր ժողովի նիստում՝ տվյալ ֆակուլտետի ներկա պատվիրակների ձայների պարզ մեծամասնությամբ:
68. Ֆակուլտետային ՈՒԽ-երի նախագահներին անվստահություն կարող են հայտնել Ընդհանուր ժողովի՝ տվյալ ֆակուլտետի պատվիրակները՝ ձայների պարզ մեծամասնությամբ:
69. Ֆակուլտետի ՈՒԽ-ի նախագահին անվստահություն հայտնելու քվեարկությունն իրավազոր է, եթե քվեարկել է տվյալ ֆակուլտետի պատվիրակների առնվազն 2/3-ը:
70. Ֆակուլտետային ՈՒԽ-ի նախագահի հրաժարականի կամ ուսումնառությունը ավարտելու դեպքում ՈՒԽ-ի նախագահությունը նշանակում է ժամանակավոր

պաշտոնակատար՝ առավելագույնը 3 ամիս ժամկետով, որի ընթացքում (մինչև վերոնշյալ ժամկետը լրանալու վերջին օրը ներառյալ) հրավիրվում է Ընդհանուր ժողովի՝ տվյալ ֆակուլտետի պատվիրակների նիստ, ովքեր, սույն կանոնադրության սահմանված կարգով,ընտրում են ֆակուլտետի նոր նախագահին:

71. Ֆակուլտետային ՈՒԽ-ի նախագահը ընտրվում է 2 տարի ժամկետով:

11. ՈՒԽ-Ի ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ

72. ՈՒԽ-ի նախագահը, փոխնախագահը, նախագահի տեղակալը, պատասխանատու քարտուղարը և օգնականները միասին կազմում են ՈՒԽ-ի Վարչությունը:
73. ՈՒԽ-ի Վարչությունը գնահատում և համակարգում է ՈՒԽ-ի հանձնաժողովների և ֆակուլտետային ՈՒԽ-երի ընթացիկ գործունեությունը:
74. ՈՒԽ-ի նախագահի օգնականները նշանակվում և փոփոխվում են ՈՒԽ-ի նախագահի կողմից:
75. Վարչության անդամներին՝ փոխնախագահին, նախագահի տեղակալին և պատասխանատու քարտուղարին, առաջին անգամ նշանակում է ՈՒԽ-ի նախագահը, իսկ հետագա փոփոխությունները կատարվում են նախագահի առաջարկով և վարչության անդամների հաստատումով:

12. ՈՒԽ-Ի ՆԱԽԱԳԱՀԸ

76. ՈՒԽ-ի նախագահը՝
    1) ղեկավարում է ՈՒԽ-ի աշխատանքները,
    2) ներկայացնում է ՈՒԽ-ն ՀՊՏՀ ՊՈԱԿ-ում և ՀՊՏՀ ՊՈԱԿ-ից դուրս փոխհարաբերություններում,
    3) տալիս է հանձնարարականներ և կարգադրություններ,
    4) հրավիրում է խորհրդակցություններ և իրականացնում ընդհանուր վերահսկողական գործառույթներ ՈՒԽ-ի գործունեության նկատմամբ,
    5) իր բացակայության ընթացքում նախագահին կարող է փոխարինել փոխնախագահը կամ տեղակալը, իսկ նրանց բացակայության դեպքում՝ քարտուղարը, օգնականները կամ նախագահության այլ անդամ,
    6) բուհի կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է իրեն վերապահված այլ լիազորություններ:
77. ՈՒԽ-ի նախագահն ընտրվում է Ընդհանուր ժողովի պատվիրակների կազմից՝ առաջադրման կամ ինքնաառաջադրման եղանակով:
78. Որպես ՈՒԽ-ի նախագահի թեկնածու կարող է առաջադրվել ՀՊՏՀ ՊՈԱԿ-ի այն ուսանողը, ով բավարարում է հետևյալ պահանջներին՝
    1) հանդիսանում է ՈՒԽ-ի Ընդհանուր ժողովի անդամ,

2) նվազագույնը վերջին 3 տարին ՀՊՏՀ ՊՈԱԿ-ի ուսանող է:

79. ՈՒԽ-ի նախագահի յուրաքանչյուր թեկնածուի Ընդհանուր ժողովի նիստում տրվում է 15 րոպե ժամանակ՝ ներկայացնելու իր ծրագիրը, որից հետո Ընդհանուր ժողովի պատվիրակների առաջարկությամբ ձևավորվում է հաշվիչ հանձնաժողովի կազմը՝ բաղկացած նվազագույնը 3, առավելագույնը՝ 5 անդամից, որն էլ տեղում փակ-գաղտնի քվեարկությամբ կազմակերպում է ՈՒԽ-ի նախագահի ընտրությունը:

80. ՈՒԽ-ի նախագահն ընտրվում է Ընդհանուր ժողովի նիստին ներկա պատվիրակների ձայների պարզ մեծամասնությամբ, պաշտոնավարման 2 տարի ժամկետով:

81. ՈՒԽ-ի նախագահին անվստահություն կարող են հայտնել Ընդհանուր ժողովի պատվիրակները՝ ձայների պարզ մեծամասնությամբ:

13. ՈՒԽ-Ի ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

82. ՈՒԽ-ն իր գործունեության ապահովման համար կարող է ֆինանսավորվել հետևյալ աղբյուրներից.

1) «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքով և ՀՊՏՀ ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ սահմանված կարգով և չափով ՀՊՏՀ ՊՈԱԿ-ի բյուջեից հատկացվող ֆինանսական միջոցներ,
2) ՈՒԽ-ին տրամադրվող նվիրատվություններ,
3) հանգանակություններ,
4) դրամաշնորհային ծրագրերից տրամադրվող ֆինանսական միջոցներ,
5) ֆիզիկական և իրավաբանական անձանցից, ինչպես նաև օրենքով չարգելված աղբյուրներից տրամադրվող այլ ֆինանսական միջոցներ:

14. ՈՒԽ-Ի ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

83. ՈՒԽ-ի գործունեությունը կարող է դադարեցվել Ընդհանուր Ժողովի պատվիրակների 2/3-ի որոշմամբ: